**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս եւ որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

առաջնորդվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 115-րդ հոդվածով,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

1) 102-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ կետով՝

«6. Նախքան «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման (հակադեմփինգային) եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 8 հավելված) 291-րդ կետի երրորդ եւ յոթերորդ պարբերություններով նախատեսված՝ Հանձնաժողովի ակտերն ուժի մեջ մտնելը, այն ժամկետները, որոնց ընթացքում կարող է մաքսային մարմին ներկայացվել առանձնացված մրցակցող շուկա չմտնող՝

անդամ պետության տարածքում ներմուծված ապրանքն սպառելու հաստատումը, սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:».

2) «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (նշված պայմանագրի թիվ 1 հավելված) II բաժինը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 30[1] կետով.

«30[1]. Սույն հիմնադրույթի 30-րդ կետի դրույթները կիրառվում են հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցները կիրառելու կամ չկիրառելու հարցերի վերաբերյալ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումների նկատմամբ՝ հաշվի առնելով «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման (հակադեմփինգային) եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» արձանագրության (Պայմանագրի թիվ 8 հավելված) VIII բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմը՝ այդ մեխանիզմի կիրառման ժամանակահատվածում:».

3) «Երրորդ երկրների նկատմամբ հատուկ պաշտպանական, հակագնագցման (հակադեմփինգային) եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին» արձանագրության մեջ (նշված պայմանագրի թիվ 8 հավելված)՝

VIII բաժինը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«VIII. Հատուկ մեխանիզմը՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս եւ որոշումներ ընդունելիս

1. «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 30-րդ կետի կիրառման առանձնահատկությունները՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին որոշումների առնչությամբ

275. «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) 30-րդ կետին համապատասխան ներկայացված՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու (չկիրառելու) մասին Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը չեղարկելու կամ դրանում փոփոխություններ կատարելու մասին առաջարկը պետք է պարունակի Հանձնաժողովի կոլեգիայի որոշումն այդպես չեղարկելու կամ դրանում փոփոխություն կատարելու տնտեսական հիմնավորում (փոփոխություններ կատարելու մասին առաջարկը ներկայացնելու դեպքում՝ նշելով այդ փոփոխությունները):

276. Հանձնաժողովի կոլեգիայի՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու (չկիրառելու) մասին որոշումը, որի նկատմամբ, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) 30-րդ կետի չորրորդ կամ հինգերորդ պարբերությանը համապատասխան, առաջարկ է ներկայացվել, ուժի մեջ չի մտնում եւ կասեցվում է Միջկառավարական խորհրդի կողմից հարցը քննարկվելու եւ այդ քննարկման արդյունքներով համապատասխան որոշում ընդունվելու համար անհրաժեշտ ժամկետով կամ, նախքան Հանձնաժողովի կոլեգիայի տվյալ որոշման մեջ այն փոփոխություններն ուժի մեջ մտնելը, որոնք, սույն արձանագրության 282-րդ կետին համապատասխան, ընդունվել են՝ ելնելով Միության դատարանի եզրակացության մեջ պարունակվող եզրահանգումներից:

277. Ուսումնասիրություններն անցկացնող մարմինը պատրաստում է եզրակացություն՝ Հանձնաժողովի կոլեգիայի այն որոշումը փոփոխելու վերաբերյալ առաջարկներով, որը, սույն արձանագրության 276-րդ կետին համապատասխան, կասեցվել է՝ հավասարակշռվածության սկզբունքին դրա համապատասխանությունն ապահովվելու նպատակով:

278. Հավասարակշռվածության սկզբունքն այն է, որ անդամ պետության՝ իր տնտեսական հիմնավորման մեջ շարադրված շահերին վնաս պատճառելու

հիմնավորված ռիսկերը բացառվեն, սույն կարգին համապատասխան, անդամ պետությունների տնտեսության ճյուղի շահերի պաշտպանությունն ապահովելիս:

279. Անդամ պետության շահերին վնասի պատճառման հիմնավորված ռիսկերի բացառման մասով հավասարակշռվածության սկզբունքի պահպանման չափանիշ է համարվում, ելնելով այդպիսի հիմնավորված ռիսկերի բնույթից, հետեւյալ միջոցների կիրառումը՝

1) դիմումատու հանդիսացող արտադրողների եւ դիմումին կողմ արտահայտված արտադրողների համար վարքագծային առաջարկությունները՝ անդամ պետությունների սպառողների խտրականություն, անդամ պետությունների սպառողների համար ապրանքի ֆիզիկական եւ (կամ) գնային անհասանելիություն թույլ չտալու առնչությամբ, ինչպես նաեւ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող արտադրողների համար այլ անհրաժեշտ պայմաններ՝ ներառյալ գների չհիմնավորված աճը թույլ չտալը.

2) Հանձնաժողովի կոլեգիայի որոշման իրագործման մոնիթորինգ՝ արտադրողների կողմից վարքագծային առաջարկությունները պահպանելու եւ շուկայում իրավիճակի վերլուծության վերաբերյալ.

3) կրկնակի քննարկման անցկացում վարքագծային առաջարկությունների էական խախտումների եւ (կամ) շուկայում իրավիճակի բացասական փոփոխությունների ռիսկերի իրագործման դեպքում՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի փոփոխման կամ չեղարկման նպատակներով:

280. Ուսումնասիրություններն անցկացնող մարմնի եզրակացությունը պետք է հիմնվի անդամ պետության տնտեսական հիմնավորման մեջ շարադրված ռիսկերի (այդ թվում՝ անդամ պետությունների սպառողների խտրականության, ապրանքի անհասանելիության առաջացման ռիսկերը՝ հաշվի առնելով շուկայի կառուցվածքը, եւ այլ ռիսկեր) եւ անդամ պետությունների տնտեսության ճյուղի շահերի համընդհանուր վերլուծության արդյունքների վրա:

281. Միջկառավարական խորհրդի կողմից որոշում ընդունվելու ժամանակ կոնսենսուսի բացակայության դեպքում հարցը դրվում է Միջկառավարական խորհրդի կրկնակի քննարկման՝ փոխընդունելի լուծում փնտրելու եւ մշակելու համար:

Միջկառավարական խորհրդի կողմից փոխընդունելի լուծման հանգման դեպքում Հանձնաժողովի կոլեգիայի՝ սույն արձանագրության 276-րդ կետին համապատասխան կասեցված որոշումն ուժի մեջ է մտնում, Միջկառավարական խորհրդի որոշմանը համապատասխան, դրանում փոփոխություններ կատարելուց հետո:

282. Կրկնակի քննարկման ժամանակ Միջկառավարական խորհրդի փոխընդունելի լուծման բացակայության դեպքում Հանձնաժողովը դիմում է Միության դատարան՝ Միության դատարանի ստատուտի 46-րդ կետին համապատասխան (Պայմանագրի թիվ 2 հավելված)՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշման մեջ, սույն արձանագրության 277-280-րդ կետերին համապատասխան, հավասարակշռվածության սկզբունքի պահպանման մասով պարզաբանման մասին դիմումով (դրանում ուսումնասիրություններն անցկացնող մարմնի եզրակացության վրա հիմնված՝ առաջարկվող լրացումներով ու փոփոխություններով):

Հանձնաժողովի կոլեգիան սահմանված կարգով կրկնակի քննարկում է հարցը եւ Հանձնաժողովի կոլեգիայի՝ սույն արձանագրության 276-րդ կետին համապատասխան կասեցված որոշումը համապատասխանեցնում է Միության դատարանի եզրակացության մեջ պարունակվող եզրահանգումների հետ: Այդ որոշումն ուժի մեջ է մտնում սահմանված կարգով:

283. Սույն արձանագրության 277-282-րդ կետերով նախատեսված ընթացակարգերն իրականացվում են Հանձնաժողովի կոլեգիայի՝ սույն արձանագրության 281-րդ եւ 282-րդ կետերով նախատեսված՝ փոփոխված որոշումն ընդունելու համար անհրաժեշտ ժամկետներում, սակայն Հանձնաժողովի կոլեգիայի որոշումն ուժի մեջ մտնելը կասեցնելու ամսաթվից

հետո 12 ամսից ոչ ուշ՝ սույն արձանագրության 276-րդ կետին համապատասխան:

284. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի կոլեգիայի՝ սույն արձանագրության 282-րդ կետին համապատասխան ընդունված որոշման նկատմամբ արվել է առաջարկ՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի (Պայմանագրի թիվ 1 հավելված) 30-րդ կետի չորրորդ կամ հինգերորդ պարբերությանը համապատասխան, հարցը դրվում է Բարձրագույն խորհրդի առաջիկա նիստին քննարկման՝ փոխընդունելի լուծում փնտրելու եւ մշակելու համար՝ առանց սույն արձանագրության 276-282-րդ կետերով նախատեսված ընթացակարգերը կատարելու:

## 2. Հանձնաժողովի կոլեգիայի՝ սույն արձանագրության 282-րդ կամ 284-րդ կետին համապատասխան, ուժի մեջ մտած որոշման իրագործման մոնիթորինգը

285. Հանձնաժողովի կոլեգիայի՝ սույն արձանագրության 282-րդ կամ 284-րդ կետին համապատասխան, ուժի մեջ մտած որոշման հիման վրա կիրառվող հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի գործողության ժամկետի յուրաքանչյուր 12 ամիսը լրանալուց հետո, Հանձնաժողովն անցկացնում է մոնիթորինգ՝ ապրանք սպառողների նկատմամբ նշված միջոցի ազդեցության եւ դիմող-արտադրողների կողմից այն միջոցների իրականացման վերաբերյալ, որոնք, պայմանավորված հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառմամբ, նպաստում են փոփոխվող տնտեսական պայմաններին տնտեսության ճյուղի հարմարեցմանը:

Յուրաքանչյուր այդպիսի մոնիթորինգի արդյունքների մասին զեկույցը Հանձնաժողովի կողմից ներկայացվում է Միջկառավարական խորհրդի քննարկմանը:

## 3. Հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցները

կիրառելու կամ չկիրառելու մասին որոշումները Հանձնաժողովի կոլեգիայի կողմից ընդունվելու առանձնահատկությունները

286. Այն դեպքում, երբ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների քվեարկության արդյունքներով ուսումնասիրություն անցկացնող մարմնի կողմից առաջարկվող հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին որոշում չի ընդունվել, Հանձնաժողովի կոլեգիայի քննարկմանն է ներկայացվում միջոցը չկիրառելու մասին որոշման նախագիծը, որն ընդունվում է սահմանված կարգով՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների հիմնավորված առարկությունների հիման վրա:

Ուսումնասիրություններ անցկացնող մարմնի կողմից առաջարկված՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառմանը դեմ քվեարկած՝ Հանձնաժողովի կոլեգիայի յուրաքանչյուր անդամի գրավոր հիմնավորված առարկությունները, բացառությամբ գաղտնի բնույթի տեղեկությունների, Հանձնաժողովի կոլեգիայի որոշման հետ մեկտեղ, հրապարակվում են «Ինտերնետ» ցանցի՝ Միության պաշտոնական կայքում:

4. Վարքագծային առաջարկություններ արտադրողների համար

287. Ուսումնասիրություններն անցկացնող մարմինը դիմումատու հանդիսացող եւ դիմումին կողմ արտահայտված արտադրողների համար մշակում է վարքագծային առաջարկություններ, որոնք դառնում են հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին որոշման անբաժանելի մասը՝ հետեւյալ դեպքերից մեկի ժամանակ՝

եթե անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ հսկողության ոլորտում լիազորված՝ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանման կողմից սույն արձանագրության 221-րդ կետին համապատասխան անցկացված գնահատման արդյունքներով եզրակացություն է տրամադրվել Միության համապատասխան ապրանքային

շուկայում մրցակցության վրա հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի ենթադրյալ բացասական ազդեցության մասին.

եթե անդամ պետության գործադիր իշխանության՝ ներքին շուկայի պաշտպանության միջոցների կիրառման ոլորտում դիրքորոշում ձեւավորելու եւ Հանձնաժողով ուղարկելու համար լիազորված մարմնից (այսուհետ՝ իրավասու մարմին) ստացվել է դիմում՝ քննարկման օբյեկտ հանդիսացող ապրանք սպառողների խտրականության եւ (կամ), հաշվի առնելով շուկայի կառուցվածքը, ապրանքի անհասանելիության առաջացման ռիսկերի հիմնավորումով:

Հանձնաժողովի՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման նկատմամբ հսկողության ոլորտում լիազորված կառուցվածքային ստորաբաժանումը Միության համապատասխան ապրանքային շուկայում մրցակցության վրա հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի ենթադրյալ բացասական ազդեցության մասին եզրակացությունների հետ միասին իրավունք ունի ուսումնասիրություններն անցկացնող մարմին ներկայացնելու վարքագծային առաջարկությունների պահպանման վերաբերյալ առաջարկներ:

288. Վարքագծային առաջարկությունները կարող են ներառել անդամ պետությունում սպառողների խտրականություն եւ (կամ) ապրանքի անհասանելիության առաջացում չթույլատրող միջոցներ, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ պայմաններ:

289. Ուսումնասիրություններն անցկացնող մարմնի կողմից վարքագծային առաջարկությունների զգալի խախտումներ հաստատվելու դեպքում հնարավոր կարճ ժամկետում, որը, որպես կանոն, չի գերազանցում ուսումնասիրությունն սկսելու օրվանից 6 ամիսը, անցկացվում է կրկնակի ուսումնասիրություն, որի արդյունքներով, հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցը փոփոխվում կամ չեղարկվում է՝ ելնելով ապրանքային շուկայի համար խախտումների հետեւանքների ծանրությունից:

## 5. Տեղեկատվության հավաքագրումը

290. Սույն արձանագրության VI բաժնի դրույթները, որոնք վերաբերում են ուսումնասիրություններն անցկացնող մարմնի հարցմամբ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տեղեկատվության տրամադրմանը, կիրառվում են սույն բաժնով նախատեսված մոնիթորինգի նկատմամբ:

## 6. Գնագցող կամ սուբսիդավորվող ներմուծման դեպքում անդամ պետությունների տնտեսության ճյուղը սահմանելու առանձնահատկությունները

291. Այն դեպքում, երբ անդամ պետությունների տնտեսության ճյուղն ընկալվում է սույն արձանագրության 233-րդ կետով սահմանված իմաստով, առանձնացված մրցակցող շուկայի տարածքը համընկնում է մեկ կամ մի քանի անդամ պետությունների տարածքների հետ եւ ուսումնասիրության արդյունքներով ընդունվում է որոշում՝ հակագնազգման կամ փոխհատուցման միջոց կիրառելու մասին, ապա այդպիսի միջոցը կիրառվում է բացառապես ուսումնասիրվող առանձնացված մրցակցային շուկայի տարածքում օգտագործման համար մատակարարվող ապրանքների ներմուծման նկատմամբ:

Հակագնազգման կամ փոխհատուցման տուրք սահմանելու միջոցով սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված որոշմանը համապատասխան՝ հակագնազգման կամ փոխհատուցման միջոց կիրառելու դեպքում, այդպիսի տուրքի վճարումն իրականացվում է առանձնացված մրցակցող շուկա մտնող անդամ պետության տարածք ներմուծվող եւ այն մաքսային ընթացակարգերով ձեւակերպվող ապրանքների նկատմամբ, որոնցով ձեւակերպելու պայմանը հակագնազգման կամ փոխհատուցման տուրքերի վճարումն է:

Գործադիր իշխանության՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմնի այն հաստատումը ներկայացնելիս, ըստ որի ներմուծված ապրանքն սպառվել է առանձնացված մրցակցող շուկա չմտնող

անդամ պետության տարածքում, հակագնազցման կամ փոխհատուցման տուրքի գումարը ենթակա է վերադարձի՝ սույն արձանագրության հավելվածով նախատեսված կարգով: Այն ժամկետը, որի ընթացքում այդ հաստատումը կարող է ներկայացվել մաքսային մարմին, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Առանձնացված մրցակցող շուկա չմտնող անդամ պետության տարածքում գնազցող կամ սուբսիդավորվող ներմուծման առարկա հանդիսացող ապրանքի սպառումը հաստատելու կարգը սահմանվում է Հանձնաժողովի կողմից եւ կարող է նախատեսել անդամ պետությունների օրենսդրության կիրառում:

Առանձնացված մրցակցող շուկա չմտնող անդամ պետության տարածք ներմուծվող եւ այն մաքսային ընթացակարգերով ձեւակերպվող ապրանքների նկատմամբ, որոնցով ձեւակերպելու պայմանը հակագնազցման կամ փոխհատուցման տուրքերի վճարումն է, տրամադրվում է հակագնազցման կամ փոխհատուցման տուրքի վճարման մասով պարտավորության կատարման ապահովում՝ ըստ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով նախատեսված կարգի:

Հակագնազցման կամ փոխհատուցման տուրքի վճարման մասով պարտավորության կատարման ապահովումը տրամադրվում է հակագնազցման կամ փոխհատուցման տուրքի այն գումարի չափով դրամական միջոցներով (փողով), որը ենթակա կլիներ վճարման՝ առանձնացված մրցակցող շուկա մտնող անդամ պետության տարածքում այդպիսի ապրանքների ներմուծման կամ «բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով այդպիսի ապրանքի ձեւակերպման դեպքում:

Գործադիր իշխանության՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմնի այն հաստատումը ներկայացնելիս, ըստ որի ներմուծված ապրանքն սպառվել է առանձնացված մրցակցող շուկա չմտնող անդամ պետության տարածքում, որպես հակագնազցման կամ փոխհատուցման

տուրքի վճարման մասով պարտավորությունների կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) գումարները ենթակա են վերադարձի՝ ըստ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքով նախատեսված կարգի: Այն ժամկետը, որի ընթացքում այդպիսի հաստատումը կարող է ներկայացվել մաքսային մարմին, սահմանվում է Հանձնաժողովի կողմից:

Նշված հաստատումը սույն կետի յոթերորդ պարբերությանը համապատասխան սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում՝ որպես հակագնագցման կամ փոխհատուցման տուրքի վճարման մասով պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) գումարը ենթակա է հակագնագցման կամ փոխհատուցման տուրքի վճարման հաշվին հաշվանցման եւ, ըստ սույն արձանագրության հավելվածով նախատեսված կարգի, հաշվեգրման եւ բաշխման:

292. Սույն արձանագրության 291-րդ կետի դրույթները տարածվում են նաեւ նախնական հակագնագցման տուրք կամ նախնական փոխհատուցման տուրք սահմանելու միջոցով հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի կիրառման դեպքերի վրա:

Սույն արձանագրության 83-րդ, 84-րդ, 86-րդ, 146-րդ, 147-րդ եւ 149-րդ կետերում նշված հանգամանքները վրա հասնելու դեպքում որպես հակագնագցման կամ փոխհատուցման տուրքի վճարման մասով պարտավորության կատարման ապահովում մուտքագրված դրամական միջոցների (փողի) գումարը ենթակա է վերադարձման՝ այդ կետերով նախատեսված կարգով: Ուսումնասիրություն իրականացնող մարմինն անդամ պետությունների մաքսային մարմիններին ժամանակին տեղեկացնում է այդպիսի հանգամանքները վրա հասնելու մասին:

7. Ուսումնասիրություն անցկացնող մարմնի եւ իրավասու մարմինների փոխգործակցությունը

293. Ուսումնասիրություն անցկացնող մարմնի՝ իրավասու մարմնի հետ

ուսումնասիրություններ անցկացնելու հարցերի շուրջ փոխգործակցությունը կազմակերպելու նպատակով իրավասու մարմիններին ապահովվում է ուսումնասիրության նյութերին հասանելիությունը՝ հաշվի առնելով հետեւյալ դրույթները՝

1) ուսումնասիրություններն անցկացնող մարմինն ուսումնասիրության ընթացքում, հաշվի առնելով սույն արձանագրության 258-րդ կետի պահանջները, իրավասու մարմիններին, իրենց հարցման հիման վրա, տալիս է սույն արձանագրության 213-րդ կետի չորրորդ եւ հինգերորդ պարբերությունների մեջ նշված տեղեկություններին ծանոթանալու հնարավորություն՝ «Ինտերնետ» ցանցի Միության պաշտոնական կայքում այդ տեղեկություններին հասանելիություն ապահովելու միջոցով կամ ուսումնասիրություններն անցկացնող մարմնի կողմից սահմանված այլ եղանակով, ինչպես նաեւ հնարավորություն է տալիս ուսումնասիրություններն անցկացնող մարմնի տրամադրության տակ եղած՝ Միության եւ անդամ պետությունների ապրանքային շուկաների կառուցվածքի ու կոնյունկտուրայի մասին տեղեկատվությանը ծանոթանալու համար.

2) իրավասու մարմինները երրորդ անձանց չեն փոխանցում եւ այլ եղանակով չեն հրապարակում ուսումնասիրության անցկացման հետ կապված տեղեկատվությունը:

## 8. Մրցակցության վրա պաշտպանական միջոցների ազդեցության հետեւանքների գնահատումը

294. Հանձնաժողովի՝ անդրսահմանային շուկաներում մրցակցության ընդհանուր կանոնների պահպանման համար հսկողության ոլորտում լիազորված կառուցվածքային ստորաբաժանման կողմից միջոցի գործողության ժամկետը լրանալու հետ կապված՝ սույն արձանագրության 31-րդ, 109-րդ եւ 174-րդ կետերի հիման վրա անցկացվող կրկնակի ուսումնասիրությունների շրջանակներում անցկացվում է կիրառվող հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ

փոխհատուցման միջոցի՝ մրցակցության վրա ազդեցության հետեւանքների գնահատում՝ սույն արձանագրության 221-րդ կետին համապատասխան մրցակցության վրա հատուկ պաշտպանական, հակագնագցման կամ փոխհատուցման միջոցի ազդեցության գնահատում անցկացնելու շրջանակներում:

9. Սույն բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմի կիրառումը

295. Անդամ պետությունները, Միջկառավարական խորհուրդը եւ Հանձնաժողովն առաջնորդվում են սույն բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմով սկզբնական ժամանակահատվածում, որը կազմում է ««Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի մեջ հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս եւ որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի *դեկտեմբերի 26-ին* ստորագրված արձանագրությունն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 2 տարի, եւ հաջորդող 2-ամյա ժամանակահատվածների ընթացքում, եթե սկզբնական կամ հաջորդող 2-ամյա ժամանակահատվածները լրանալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ Հանձնաժողով չի ներկայացվում անդամ պետության կառավարության ղեկավարի՝ սույն բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմի կիրառումը կասեցնելու մասին ծանուցումը: Հանձնաժողովը նշված ծանուցումն ստանալու մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին՝ այն ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Նշված ծանուցումն ստանալու դեպքում անդամ պետությունները, Միջկառավարական խորհուրդը եւ Հանձնաժողովը դադարում են սույն բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմով առաջնորդվելը՝ սկզբնական կամ հերթական 2-ամյա ժամանակահատվածը լրանալուց հետո մինչեւ Միջկառավարական խորհրդի համապատասխան որոշումն ընդունելը:

Ուսումնասիրություններն անցկացնող մարմինը հրապարակում է սույն բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմի կիրառումը կասեցնելու մասին տեղեկատվությունը «Ինտերնետ» ցանցի՝ Միության պաշտոնական կայքում նախապես, սակայն սկզբնական կամ հաջորդող 2-ամյա ժամանակահատվածը լրանալուց ոչ ուշ, քան 30 օրացուցային օր առաջ:

Նախքան նշված ծանուցումն ուղարկելը՝ անդամ պետությունն իր մտադրության մասին տեղեկացնում է Հանձնաժողովին եւ խորհրդատվություններ անցկացնելու հարցում ուղարկում՝ առկա մտահոգությունները կարգավորելու նպատակով:

Սույն բաժնով նախատեսված հատուկ մեխանիզմի կիրառումը վերսկսելու օրվանից անդամ պետությունները, Միջկառավարական խորհուրդը եւ Հանձնաժողովը շարունակում են առաջնորդվել սույն կետի առաջին պարբերությամբ նախատեսված կարգով: Ընդ որում, 2-ամյա ժամանակահատվածների ընթացքը հաշվվում է այդ մեխանիզմի կիրառումը վերսկսելու օրվանից:

296. Հատուկ մեխանիզմի կիրառումն սկսելու կամ վերսկսելու ամսաթվով անցկացվող ուսումնասիրությունների վրա սույն բաժնի դրույթները տարածվում են միայն ուսումնասիրության ընթացքը չխախտող մասով:».

լրացնել հետեւյալ բովանդակությամբ IX բաժնով.

«IX. Եզրափակիչ դրույթները

1. Հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման մասին որոշումները դատական կարգով բողոքարկելու առանձնահատկությունները

297. Հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառման հետ կապված՝ Հանձնաժողովի որոշումները եւ (կամ) Հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) վիճարկելու մասին

գործերը քննելու կարգը եւ առանձնահատկությունները որոշվում են Միության դատարանի ստատուտով (Պայմանագրի թիվ 2 հավելված) եւ Միության դատարանի կանոնակարգով:

2. Միության դատարանի որոշումների կատարումը

298. Հանձնաժողովն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում Միության դատարանի՝ հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցների կիրառմանը վերաբերող որոշումները կատարելու համար: Միության դատարանի կողմից Պայմանագրին եւ (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին չհամապատասխանող ճանաչված՝ Հանձնաժողովի որոշումը Հանձնաժողովի կողմից համապատասխանեցվում է Պայմանագրին եւ (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին՝ ուսումնասիրություններ անցկացնող մարմնի նախաձեռնությամբ Միության դատարանի որոշումը կատարելու համար անհրաժեշտ կրկնակի ուսումնասիրություն անցկացնելու միջոցով:

Կրկնակի ուսումնասիրություն իրականացնելիս, հաշվի առնելով համապատասխան տարբերությունները, կիրառվում են ուսումնասիրության իրականացմանն առնչվող դրույթները:

Սույն կետով նախատեսված կրկնակի ուսումնասիրություն իրականացնելու ժամկետը, որպես կանոն, չի գերազանցում 9 ամիսը:

3. Ուսումնասիրության ընթացակարգերի վարչարարությունը

299. Հանձնաժողովը, սույն արձանագրության կատարման նպատակով, որոշումներ է ընդունում ուսումնասիրություն սկսելու, իրականացնելու, ավարտելու եւ (կամ) կասեցնելու ընթացակարգերի վերաբերյալ: Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների արդյունքում չպետք է փոփոխվեն Պայմանագրի դրույթները կամ դրանք չպետք է հակասեն այդ դրույթներին:»:

Հոդված 2

Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է <u>*Սանկտ Պետերբուրգ*</u> քաղաքում, 202<u>*4*</u> թվականի <u>*դեկտեմբերի 26-ին*</u>, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն արձանագրության բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն արձանագրության ավանդապահ, անդամ պետություններից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված պատճենը:

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետության կողմից՝** | **Բելառուսի Հանրապետության կողմից՝** | **Ղազախստանի Հանրապետության կողմից՝** | **Ղրղզստանի Հանրապետության կողմից՝** | **Ռուսաստանի Դաշնության կողմից՝** |

Սույնով հավաստում եմ, որ տվյալ տեքստը ««Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակագնագցման եւ փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս եւ որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին»» արձանագրության ամբողջական եւ նույնական պատճենն է, որը 2024 թվականի դեկտեմբերի 26-ին Սանկտ Պետերբուրգ քաղաքում ստորագրել են՝

Հայաստանի Հանրապետության կողմից՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ՝ Ն.Վ. Փաշինյանը.

Բելառուսի Հանրապետության կողմից՝ Բելառուսի Հանրապետության նախագահ՝ Ա.Գ. Լուկաշենկոն.

Ղազախստանի Հանրապետության կողմից՝ Ղազախստանի Հանրապետության նախագահ՝ Կ.Կ. Տոկաեւը.

Ղրղզստանի Հանրապետության կողմից՝ Ղրղզստանի Հանրապետության նախագահ՝ Ս.Ն. Ժապարովը.

Ռուսաստանի Դաշնության կողմից՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ՝ Վ.Վ. Պուտինը:

Բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում:

Ընդամենը ժապավինված է,
ստորագրությամբ եւ կնիքով
ամրագրված է պատճենի 16 թերթ

**Եվրասիական տնտեսական**
**հանձնաժողովի իրավական**
**դեպարտամենտի տնօրեն՝** **Լ. Վ. Ծչուր-Տրուխանովիչ**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024 թվականի դեկտեմբերի 26-ին քաղաք Սանկտ Պետերբուրգում ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրում հատուկ պաշտպանական, հակագնագցման և փոխհատուցման միջոցներ կիրառելու կամ չկիրառելու մասին ուսումնասիրություններ անցկացնելիս և որոշումներ ընդունելիս հատուկ մեխանիզմին վերաբերող մասում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**